

ՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻՈՆՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ -

ԼԵՆԻՆԻ ՊԵՍ

(ԲԵՄԱԿՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ)

Թարգմ. ն. ԶԱՐԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

17 JUL 2006

19 NOV 2010

891.71

2-70

պր.

ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ-
ԼԵՆԻՆԻ ՊԵՍ

(Բեմադրելու համար)

Թարգմ. Ն. ԶՅՐՅՍՆ



1006
27458

15.168
871.51
05-4

ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Պիեսի բեմադրութեան համար վոչ մի նկարված դեկորացիա հարկավոր չի: Բեմի խորքում պետք է դնել յերկու փոքրիկ դադգյահ (ստանոկ), իսկ դադգյահ չեղած դեպքում՝ յերկու սեղան: Լավ կլինի դադգյահները մոտ սարքել սանդուղք՝ նրանց վրա խաղալը հարմար դարձնելու համար: Այդ դադգյահները պետք է ոգտագործել բանվորներին, Անտանտին, բուրժուազիային բեմի վրա շարժողութեան մեջ դնելու համար: Բացի այդ՝ անհրաժեշտ է սարքել 5-րդ եջի պլանի համաձայն մի վահան, վորն ամբողջ խաղի ընթացքում մնալու յե բեմի կենտրոնում:

Վահանը պետք է դնել բեմի յետևի մասից յերկու արշին հեռավորութեան վրա:

Վահանը պատրաստվում է հետևյալ կերպ. վերջընում են $2\frac{1}{2}$ արշին լայնութեան և $3\frac{1}{4}$ արշ. բարձրութեան փայտե շրջանակ. շրջանակը պատում են դրվագաթերթով (фанера): Վերից 4 վերջոկ ներքև նրա վրա բացում են 12×20 վերջ. չափ մի անցք: Հետո, վահանի շրջանակից, ինչպես և մեկը մյուսից 4 վերջ. հեռավորութեան վրա, բացում են 2 դռնակ, յուրաքանչյուրը 1 արշ. 9 վերջ. բարձրութեամբ և 14 վերջ. լայնութեամբ: Դռնակների կողերին շրջանակի ներքևից $1\frac{1}{4}$ արշ. դեպի վեր բանալ 2 փոքրիկ կլոր անցքեր, վորոնց մեջ տեղավորվելու յեն ձայնատար-

ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Պիեսի բեմադրություն համար վոչ մի նկարված դեկորացիա հարկավոր չի: Բեմի խորքում պետք է դնել յերկու փոքրիկ դաղգյահ (ստանոկ), իսկ դաղգյահ չեղած դեպքում՝ յերկու սեղան: Լավ կլինի դաղգյահները մոտ սարքել սանդուղք՝ նրանց վրա խաղալը հարմար դարձնելու համար: Այդ դաղգյահները պետք է ողտագործել բանվորներին, Անտանտին, բուրժուազիային բեմի վրա շարժություն մեջ դնելու համար: Բացի այդ՝ անհրաժեշտ է սարքել 5-րդ եջի պլանի համաձայն մի վահան, վորն ամբողջ խաղի ընթացքում մնալու յե բեմի կենտրոնում:

Վահանը պետք է դնել բեմի յետևի մասից յերկու արջին հեռավորության վրա:

Վահանը պատրաստվում է հետևյալ կերպ. վերցնում են $2\frac{1}{2}$ արջին լայնության և $3\frac{1}{4}$ արջ. բարձրության փայտե շրջանակ. շրջանակը պատում են դրվագաթերթով (Фанера): Վերից 4 վերջուկ ներքև նրա վրա բացում են 12×20 վերջ. չափ մի անցք: Հետո, վահանի շրջանակից, ինչպես և մեկը մյուսից 4 վերջ. հեռավորության վրա, բացում են 2 դռնակ, յուրաքանչյուրը 1 արջ. 9 վերջ. բարձրությամբ և 14 վերջ. լայնությամբ: Դռնակների կողերին շրջանակի ներքևից $1\frac{1}{4}$ արջ. դեպի վեր բանալ 2 փոքրիկ կլոր անցքեր, վորոնց մեջ տեղավորվելու յեն ձայնատար-

ները (ուսպորները): Այդ անցքերից յուրաքանչյուրից վեր բացել մեկական քառակուսի անցք, այդ անցքերը պատելով կարմիր թղթով: Յերբ ձայնատարներն սկսում են գործել, այդ անցքերի յետևը վառվում են ելեկտրական լամպեր: Ամբողջ վահանն ամրացվում է հատակին՝ պատվարակալների ոգնությամբ:

Պիեսի համար սպիտակ լուսից բացի հարկավոր են նաև կարմիր և կապույտ լույսեր: Վորտեղ այդ չկա, հարկավոր է անցկացնել ժամանակավոր ելեկտրալար և ունենալ չորս կետ լույս, ըստվորում լամպերը հարկավոր է պատել գունավոր թղթով: Ծայրահեղ դեպքում կարելի չէ խաղալ միայն ճերմակ լուսով: Վորտեղ հնարավորություն կա—չպետք է չծուլանալ լույս անցկացնել, այդ գործը դժվար չէ և շատ եժան է:


Պլակատները, վորոնք հայտնվում են վահանի վերևի անցքում, պետք է լինեն 12×20 վ. մեծության, գրված դրվագաթերթի կամ ստվարաթղթի (կարտոնի) վրա: Պլակատները յետևից պետք է ունենան բռնելու տեղեր, վորպեսզի վահանի յետևը կանգնած մարդիկ հեշտ կարողանան այդ պլակատները բարձրացնել և անցքից դեպի բեմ մեկնել:

Յեթե դժվար կլինի շարժուն սլաքներ ունեցող ժամացույց սարքել, կարելի չէ 12×20 վ. մեծություն ունեցող յերկու դրվագաթերթի վրա նկարել յերկու ժամացույց: Մեկի վրա սլաքը պետք է ցույց տա 5 ժ. 50 ր., իսկ մյուսի վրա—6 ժ. 50 ր.: Հարկ յեղած բուպեյին նախապես դրված և 5 ժ. 50 ր. ցույց տվող ժամացույցը պետք է արագությամբ փոխել 6 ժ. 50 րուպե ցույց տվող ժամացույցով:

Բոլոր պլակատները ներկայացումից առաջ պետք է դնել վահանի յետևը այն կարգով, ինչ կարգով նրանք

ցույց են տրվելու, ցույց տալու ժամանակ նրանց չըխառնելու, հարկավոր պլակատը չփնտռելու համար: Հատուկ մարդ պետք է նշանակել այդ գործին հետևելու համար:

Ձայնատարները պետք է շինել ստվարաթղթից՝ փողի ձևով. Ձայնատարները դրվում են կլոր անց-



քերի մեջ: Դիմումների տարափ ստեղծելու համար ոգտագործել հին լրագրերի պատասաններ:

Յերգրերի ժամանակ պետք է յերգեն միայն աղջիկները, իսկ տղաները՝ պահպանելով ընդհանուր չափը՝ պետք է արտասանեն յերգի խոսքերը:

Գործարանի աղմուկը ներկայացնող «աղմկա-
րար որկեստը» ստեղծելու համար հարկավոր է վերցնել
մի մեծ թմբուկ, ճոճոակներ (трещотка), համրիչներ,
թակեր, փայտեր, պղնձե ափսեներ, պողպատի թեր-
թեր, զրվագաթերթեր, թիթեղ, յերկաթի կտորներ,
սուլիչներ, շղթաներ, տակը կտորած շշեր (շչակների
համար) և այլն:

Պիեսը պետք է խաղալ արագ, հստակ, առանց
ձգձգելու: Ամբողջ յերեկոն պետք է տևի մի ժամ կամ
մեկ ժամ 10 բոպեյից վոչ ավելի:

Վ. Յուրցեվ

ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ—ԼԵՆԻՆԻ ՊԵՍ

Ս. առջին պատկեր

ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ

Վարագույրը իջեցրած է:

Վարագուրի առաջ հայտնվում է պիոները:

Պիոներ.—Թանգագին ընկերներ, յերեք տա-
րի սրանից առաջ Լենինը մեռավ: Մեր հայրերի
ընկեր, մեր յեղբայրների և քույրերի ուսուցիչ
և մեր մեծ պապ՝ Իլիչի մահը ծանր հարվածով
անձագանգեց բոլոր աշխատավոր մարդկանց սրը-
տերում: Բոլոր ճնշվածները, բոլոր զրկվածները
սուր կերպով զգացին այդ մեծ կորուստը: Կա-
պիտալի ստրուկ բազում միլիոնները տխրությամբ
խոնարհեցին իրենց գլուխները անմահ Իլիչի գե-
րեզմանի առաջ: Այդ լուրն աններով՝ բուռն
հրճվանք զգաց համաշխարհային բուրժուազիան:
Նրա ստոր գործակալներն ավելի ուժեղացրին
իրենց ստոր պրովոկատորական աշխատանքը:

Թանգագին ընկերներ, հայրեր, մայրեր, յեղ-
բայրներ, քույրեր. 1924 թվի հունվարի 21-ին
ժամը 6-ից անց 50 բոպե մեռավ Իլիչը: Բայց

նրանց համար, ովքեր կառուցում ու պայքարում են, ովքեր կշարունակեն կառուցել ու պայքարել նոր կյանքի համար, նրանց համար Լենինը կապրի, հավիտյան կառաջնորդի նրանց դեպի այդ նոր կյանքը: Լենինի մահը նրա սկսած գործի մահը չէր: Նրա գործը շարունակում են մեր հայրերը, մեր յեղբայր-կոմյերիտականները: Նրա գործը կտանենք մենք—լենինյան պիոներներս: Մենք ապրել ենք, մենք ապրում ենք և ապրելու յենք մեծ, թանգազին Լենինի պատգամներով: Առանց Լենինի—Լենինի պես: (Գնում ե):

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

(Վարագույրը բարձրանում է. բեմը մութն է. մի մակագրություն է յերեվում վահանի վերին անցքուս.)

1924 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 21

Բեմի յետեվում «աղմկարար որկեստրով» տըրվում է գործարանի աղմուկը: Աղմուկն սկզբում թույլ է, սպաս աստիճանաբար աճում է յեվ ուժեղանում: Անցքից յերեվացող մակագրությունն անհետանում է, յեվ նրա տեղ յերեվում է ժամացույցի թվացույցը. սլաքները ցույց են տալիս 5 ժ. 50 րոպե: Բոպե ցույց տվող սլաքը գործարանի դրողոցի տակ սկսում է դանդաղությամբ առաջ շարժվել: Այդ սլաքը կատարում է լրիվ

շրջան: Վեցից անց է 50 րոպե: Բեմի յետեվից լսվում է հարված: Գործարանի աղմուկը վայրկենապես դադարում է: Հաստատվում է լիակատար լուռություն: Կապույտ լույս է: Բեմ է վազում առաջին բանվորը):

1-ին բանվոր (աղաղակում է բեմի վրա).— Ի՞նչ է պատահել... Ընկերներ: Այստեղ ինչ-վոր բան է պատահել:

(Հայտնվում է 2-րդ բանվորը):

2-րդ բանվոր.— Ի՞նչ է պատահել:

1-ին բանվոր.— Ինչ-վոր բան է պատահել: Մեր բաժանմունքում մեքենաները կանգ առան: Ինչո՞ւ:

2-րդ բանվոր.— Յես չգիտեմ: Մեր արհեստանոցում մտտորը կանգ առավ: Շարժաբեր փուկերը դուրս թռան փոկանիֆուերից: Տրանսմիսսիաներն անշարժացան, և դապչահաները լռեցին:

(Բեմ է վազում մի բանվորուհի):

Բանվորուհի.— Ի՞նչ է: Ի՞նչ պատահեց:

1-ին բանվոր.— Ինչո՞ւ յես հարցնում:

Բանվորուհի.— Մեզ մոտ, մանածային բաժնում, բոլոր հարյուր դազգյահաները հանկարծ մեկն կանգ առան:

(Բանվորունու խոսելու միջոցին ներս ե վա-
զում 3-րդ բանվորը):

3-րդ բանվոր.—Մեզ մոտ կա: Յերեքհարուրդ
փթանոց մուրճը առանց վորևե պատճառի, վերից
վար իջնելիս, ճանապարհի կեսին կանգ առավ՝
կաթվածահարի պես:

1-ին բանվոր.—Ախր ի՞նչ պատահեց: Բան-
թողի ժամանակ ել չի: Ժամը քանի՞սն է:

Բանվորուհի.—Դեռ վաղ է, 6-ից անց է 50:

(Չախեր բեմի յետևից):

Առաջին.—Ե՛լ, այս ի՞նչ է: Ո՞վ կանգնեցրեց
մեքենաները:

Յերկրորդ.—Ընկերներ, Դինամո-մեքենան
կանգ առավ:

1-ին բանվոր.—Այս ի՞նչ է նշանակում:

2-րդ բանվոր.—Գնանք, ընկերներ, իմա-
նանք: (Գնում են):

Կ Ո Ւ Ս Ա Կ Յ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

(Արագությամբ բեմ՝ են մտնում 3 կաշվե կուրտ-
կա հագած, պորտֆելավոր մարդիկ):

Առաջին.—Ի՞նչ է պատահել, ընկերներ:

Յերկրորդ.—Յես դեռ չգիտեմ:

Յերրորդ.—Կարծես թե մի սիրտ դադարեց
տրոփել...

Առաջին.—Գուցե... վորևե բան... ԻՄիչին
ե պատահել...

Յերկրորդ (նրա խոսքը կտրելով).—Վնչ,
վնչ... ի՞նչ ես ասում... Հարկավոր է իմանալ...
Հարկավոր է ստուգել:

Յերրորդ.—Գնանք շրջկոմ:

Առաջին.—Շուտ, շուտ: Յեվ վոր կարևոր է—
հանգիստ: (Գնում են):

Ք Ա Ղ Ք Ե Ն Ի Ն Ե Ր

(Լույսը մարում է: Խավարում, բեմի՝ կենտրոնում
մի լույս է վառվում *): Լույսը հանգչում է: Աջ ու
ձախ ծայրերից վառվում են յեվս ելի յերկու լապ-
տերներ: Լուսավորում են մեկ-մեկու: Լապտերների
լուսի մեջ յերեվում են յերկու քաղցրենիներ**):

Առաջին Գ ա դ բ են ի.—Իվան Իվանիչ, դճւք եք:

Յերկրորդ.—Այո: Այդ դճւք եք. նիկոլայ
Պետրովիչ:

(Կենտրոնում լույսը նորից է վառվում: Յերկուսը աջ
յեվ ձախ կողմերից կենտրոնի կողմն են ուղղում

* Ելեկտրական փոքրիկ լապտերներ:

** Այս տեսարանը չպետք է դարձնել ծիծաղաշարժ: Այդ կիբ-
չացնի տպավորութունը: Հարկավոր է տեսարանին տալ դավա-
դրության, բաժրասանքի հատկանշական գծեր: Քաղցրենիները վա-
խեցած տեսք ունեն, կուսցած են, գլուխներն ուսերի մեջ քաշած,
ձայները խլացրած, զգուշավոր):

իրենց լապտերների լույսը: Անտեղ և յերրորդ
քաղքենին):

Յ երրորդ քաղք.—Իվան Իվանիչ, Նիկոլայ
Պետրովիչ: Ի՞նչ և պատահել...

(Քաղքենիները բեմի կենտրոնում իրար են մոտե-
նում: Առաջինն իր լապտերով լուսավորում է յեր-
կրորդի դեմքը, յերկրորդն առաջնի: Յերրորդն ինքն
իր դեմքն է լուսավորում):

Յ երկրորդ.—Գիտե՞ք, պարոններ, մեր բնակա-
րանում մի կոմպոնիստ է ապրում: Առավոտյան,
ինչպես միշտ, աջլորացած դուրս գնաց, իսկ այժմ
փետրաթափ յետ դարձավ: Աչքերը խելագարի
աչքերի պես աննպատակ թափառում են... Յետ ու
առաջ է վազում սենյակում, ինչպես գազանը
վանդակում... Յես գաղտագողի մոտեցա նրա
դռանը և ականջս դռան անցքին դրի. լսում եմ՝
նա շարունակ քրթմնջում է. «Չի կարող պատա-
հել... չի կարող պատահել»:

Յ երրորդ.—Յերևի միջազգային բարդու-
թյունն է առաջացել...

Ա. ա ջ ի ն.—Այո, այո, այո... մեր խոհանոցում
ասում էյին, իբր թե Անտանտը բայլչեիկներին
պատերազմ է հայտարարել:

Յ երկրորդ.—Այդ ճիշտ է... բոլորովին ճիշտ...
Իմ վերունիան—նա Յենտրոբուլավկայում մեքե-
նագրուհի յե. լսել է, իբր թե Ամերիկայից դեպի

բոլոր բայլչեիկները այրող ճառագայթներ և թու-
նավոր գազեր են առաքվում:

Յ երրորդ.—Այդ չի կարող պատահել, Իվան
Իվանիչ: Այրող ճառագայթները կայրեն բոլորին,
ուժ հանդիպեն իրենց ճանապարհին: Նույնը և
թունավոր գազերը: Այդպիսի բան չի կարող պա-
տահել: Դուք հո գիտեք, վոր Անտանտը, այնու-
ամենայնիվ, շատ մարդասեր է և բայլչեիկներեց
բացի ուրիշի չի ուզի վնասել:

Ա. ա ջ ի ն.—Այո, այո, այո, այդ կասկածից
վեր է, Սիմյոն Սիմյոնիչ: Պատերազմից մենք
վախ չառնենք: Դուք վճիռ թվին եք ծնվել, Սի-
մյոն Սիմյոնիչ:

Յ երրորդ.—Յե՛ս: Ութսուն չորս թվին. ինձ
չեն տանի...

Ա. ա ջ ի ն.—Հը՞... գն՞ում ենք, պարոններ:
Յ երկրորդ.—Այո, այո... գնանք...

Յ երրորդ.—Ինչ ասես, վոր չպատահի: (Դուրս
են գնում):

Ա Ն Տ Ա Ն Տ Ը

(Կապույտ լույս: Յերկրորդ պլանի աջ կողքի կու-
լիսի լետեվից մեկնվում է մի փոքրիկ պլակատ,
վորի վրա գրված է «Լեհաստան»: Նրա յետևից
դուրս է գալիս մի տղեղ կերպարանք: Շուրջն է
Նալյուս: Յերկրորդ պլանի ձախ կուլիսից պարզվում

ե մի ուրիշ պլակատ «Յապոնիա» մակագրությամբ):

Լեհաստան.—Ե՛հէյ:

Յապոնիա.—Ե՛հէյ:

Լեհաստան.—Դուք վոչինչ չնկատեցի՞ք:

Յապոնիա.—Նկատեցի: Իսկ դ՞ուք:

Լեհաստան.—Յես ել:

Յապոնիա.—Նրանց մոտ ինչ-վոր բան ե պատահել:

Լեհաստան.—Այո: Յեվ, կարծես, լուրջ բան:

Յապոնիա.—Զի՞ խորտակվել արդյոք այդ անիծված կուսակցությունը:

Լեհաստան.—Դեռ չգիտեմ:

(Առաջին պլանի կուլիսների յետեվից դուրս են գալիս ելի յերկու պլակատներ՝ «Անգլիա» յեվ «Փրանսիա» մակագրությամբ: Դուրս են ցցվում յերկու նոր կերպարանքներ):

Անգլիա.—Ի՞նչ ե պատահել:

Փրանսիա.—Ի՞նչ ե պատահել:

Լեհաստան.—Դեռ պարզված չե:

Յապոնիա.—Բայց կարծես ինչ-վոր շատ լուրջ բան կա:

Լեհաստան.—Կհրամայե՞ք հարձակվել: Այս պես ասած—հասցնել առաջին հարվածը:

Անգլիա.—Վոչ, վոչ... պետք ե սպասել Ամերիկային:

(Բեմի մեջտեղից բարձրանում ե Ամերիկան):

Ամերիկա.—Ոլ-րայթ: Ի՞նչ ե պատահել:

Լեհաստան.—Մեզ դեռ չհաջողվեց պարզել...

Յապոնիա.—Բայց կարծես թե ինչ-վոր շատ լուրջ բան:

Լեհաստան.—Գուցե կհրամայեք հարձակվել: Այսպես ասած՝ հասցնել առաջին հարվածը:

Ամերիկա.—Վոչ, վոչ... սպասեցեք... լավ նայեցեք, զգաստ... Հարմար ըոպեն չպետք ե ձեռքից բաց թողնել... Հարկավոր ե իմանալ՝ ինչ ե պատահել... Գուցե մենք այժմ կարող կլինենք խաղը տանել: Ոլ-րայթ: Կոմմունիստների մոտ ինչ-վոր բան ե պատահել...

Լեհաստան.—Ինչ-վոր բան ե պատահել...

Փրանսիա.—Ինչ-վոր բան ե պատահել...

Յապոնիա.—Ինչ-վոր բան ե պատահել...

Անգլիա.—Ինչ-վոր բան ե պատահել...

(Լույսը հանգչում ե):

Յեկուորդ պատկեր

Լ Ե Ն Ի Ն Ը Մ Ե Ռ Ա Վ

Մուրն ե:

Լուսբյուն:

(Լուսբյունը հանկարծ խանգարում են դահլիճից ինչ-վոր ձայներ: Չայները գալիս են դահլիճի ծայրից, ապա մոտենում են բեմին: Չորրորդ ձայնարկումից հետո ձայները բարձրանում են բեմ՝ իրարից հեռանալով):

1-ին ձայն.— Ընկերներ, լուռ: Լսեցեք, մեռավ Վլադիմիր Իլլիչ Լենինը:

2-րդ ձայն.— Բանվորներ ամբողջ աշխարհի, լսեցեք: Մեռավ մեր ղեկավարը: Մեռավ մեծ Լենինը:

3-րդ ձայն.— Վե՛րկոռուսներ, բելոռուսներ, ուկրաինացիներ, լեզգիներ, լեռնականներ, հայեր, հրեաներ, թաթարներ, վրացիներ, կիրգիզներ, բաշկիրներ, սարթեր—մեռավ, մեռավ մեծագույն մարտիկը:

4-րդ ձայն (բեմի յետևվից).— Յեվրոպա, Ամերիկա, Ասիա, Աֆրիկա, Ավստրալիա, լսեցեք: Մեռավ, մեռավ մեր մեծ ղեկավարը:

5-րդ ձայն.— Սպիտակամորթներ, դեղնամորթներ, սևամորթներ, կարմրամորթներ, Լենինը մեռավ, մեռավ մեծ Լենինը:

6-րդ ձայն.— Վե-կԱ-ՊԵ, կոմսոմոլ, պիոներներ, լսեցեք, մեռավ մեր ընկերը, ղեկավարը, ուսուցիչը, մեռավ Վլադիմիր Իլլիչ Լենինը:

1-ին ձայն (դալիճից).—

Արև, կանգ առ,
եխ, կանգ առ, լսիր, արև.
մի՛ զնգա այսոր ձյուններում.
գիտե՛ս դու,
գիտե՛ս, վոր արդեն դադարեց
Լենինի սիրտը հրահրուն:

2-րդ ձայն.—

Համաշխարհ, գործարան, անդուլ իմ դազգյահ,
չի գա նա փոթորկի ժամին.
լսիր, համաշխարհ, կորցրել են հանկարծ
բանական իրենց տիտանին:


3-րդ ձայն.—

Ե՛լ յերբեք, յերբեք չեն թափվելու
խոսքերի հրդեհող կայծերը.
հեղափոխության հնոցից բորբ
հակա հնոցական հեռացել ե: (Ա. Ժարով)

Բեմի վրա կապույտ լույս:

(Հնչում ե թաղման քայլերը: Առաջին պլանի

1006
927758



ձախ կուլիսի յետեվից դանդաղ դուրս ե գալիս
պիոններուն: Կանգ ե առնում նախաբեմի աջա-
կողմում: Հստակ առոգանությամբ, ներդաշնակե-
լով իր խոսքերը թաղման քայլերգին, արտասա-
նում ե):

Պիոններուն հի.—

Գործարանները, գրասենյակները, նավախոր-
շերը

ստացան ծանր կաթված.—

Վլադիմիր Լենինը մեռել ե,

մեռել ե Իլյիչն ալեգարդ:

Մի սուր ցավ խիստ ծամածոնց

բերանները, դեմքերը մարդկային

Դոնբասի ածխահանքերից

մինչ վոսկոհանքերը Չիտայի:

Կարգացին՝ գունատ կանգ առան

յերկու խելահեղ բառից.

ոտար մարդկանց մոտ—ակամա—

հեկեկանքն ուսերը ցնցեց:

Ու վիշտը ծնկները ծալեց,

յերկերը վշտից հեկեկաց.—

մեռավ Վլադիմիր Լենինը,

ավագ ժողկոմը բանվորական:

(Լռում ե: Ձախ կուլիսի յետեվից դուրս գալով,
բեմի վրայով, թաղման քայլերգի ութմով, դան-
դաղ, սգավոր շարքերով, զույգ-զույգ անցնում են

բանվորները, բանվորուհիները, գյուղացիները,
գեղջկուհիները, կոմյերիտականները, պիոներ-
ները*):

Կապույտ գույնը փոխվում ե կարմրի:

Պիոններուն հի (յերը առաջին շարքը բեմ ե
մտնում).—

Մի լացեք, մի լացեք, մի լացեք,

մի լացեք Լենինի վրա.

Թող հալիչ հնոցները լացեն

բոցեղեն աչքերով իրանց.

դազգյահներ, աղմուկից ճայթեք,

դող, դու մոտորը կտրատիր,

դեպ գործարաններ, գրասենյակներ ու դաշ-
տեր,

բանվորներ և գյուղացիք:

Մի տիրի, թույլ, ծուլ մի լինի,

ձեռք, պինդ կպիր ուիչագին.

Լենին.

Կհիշենք մենք Լենինի

մարտական հրամանը մեկին:

Դրոշների բոցեր, վարարեք,

սեղմիր պինդ, ճնշում բանվորական,

Լենինը

միշտ մեզ հետ ե:

* Հնարավորության դեպքում այդ յերթի մեջ մտցնել բոլոր
յերկերի ներկայացուցիչներին՝ իրենց ազգային տարազներով:

Լենինը չի մեռել,

կա:

(Տրետյակով)

(Պիոներունին լուռ է: Գնում է: Թաղման քայ-
լերգն եւ չի հնչում: Լույսը սարում է):

Ա.Ռ.Ա.Ն.Յ. Լ.ԵՆ.ԻՆ.Ի

Կապույտ լույս:

(Զանազան անկյուններից յեւ հանդիսական-
ների դահլիճից բեմ են գալիս — Լեհաստանը,
Փրանսիան, Անգլիան, Յապոնիան յեւ Ամերիկան:
Ասերիկան մի ձեռքով ընկել է մենչեվիկի յեւ
եմինգրամստի վզերին հագցրած շղթան):

Ա. մ ե ռ ի կ ա. — Այժմ արթուն կաց: Սկսիր աշ-
խատանքը: (Եմինգրամստին յեւ մենչեվիկին) Մեր
հավատարիմ շներ, յելեք, գործի անցեք, իսկ մենք
եւ մեր կողմից կաշխատենք: Հայդա: Հոս: Քըս:

(Ամերիկան շներին արձակում է շղթայից: Նրանց
յետեւից գնում է... «Քըս, քըս, քըս, հայդա,
կծիր, կծիր»: Լույսը մարում է):

Սպիտակ լույս:

(Դազգյահներից մեկի վրա նստում է կապիտա-
լիստը, վահանի յերկու դնակներից դուրս են
գալիս տերտերն ու կուլակը):

Տ ե ռ ա ե ռ. — Ե՛հ, մենք բոլորս, այսպես ասած,

որհնյալ հոգիներս, սիրտը և ուղեղը սրբազան
Ռուսիայի, իմի յենք հավաքված, այստեղ ենք...

Կ ա պ ի տ ա լ ի ս տ (ընդմիջելով). — Գործի ան-
ցիր, տեր-հայր, գործի անցիր: Ի՞նչ նորություն:

Տ ե ռ ա ե ռ. — Մենք նամակ ենք ստացել նոցին
կայսերական մեծություններից: Մեզ հրամայ-
ված է այս բեմից հաղորդել ժողովրդին մի ու-
րախալի լուր: Գալիս է, գալիս է մեծ ազատա-
բարը, աստծո ընտրյալն ու ոճյալը: Նշովք նե-
ւի ծնունդ բայլչեկիներին:

Կ ա պ ի տ ա լ ի ս տ. — Գործի, տեր-հայր, գործի
անցիր: Յես հանձն եմ առնում յետ խել և ծա-
ռայեցնել իմ ոգտին ձեռնարկությունները,
տրեստները, սինդիկատները, ֆարբիկաները, գոր-
ծարանները, յերկաթուղագծերը, շոգենավերը,
քարածխի հանքերը, շախտերը: Յես յերկու վո-
տանի անասուններին նորից ստրուկ կդարձնեմ:

Տ ե ռ ա ե ռ. — Թող յերկնքի և յերկնաբնակ-
ների որհնությունը բո՛ վրա լինի, վորդիս:

Կ ու լ ա կ. — Յես կայրեմ բոլոր կոպերատիվ-
ները: Յես ամեն տեղ գյուղերում գինեաներ
կբանամ: Յես յետ կխլեմ իմ ձեռքից առած
հողը, յես կբզկտեմ բոլոր կոմունիստներին, յես
կսպանեմ բոլոր գյուղթղթակիցներին, ուսուցիչ-
ներին, գյուղատնտեսներին, յես... յես...

Կ ա պ ի տ ա լ ի ս տ. — Յես կկառուցեմ հազարա-

վոր բանտեր: Յես քաղաքների բոլոր լատերները
կվերածեմ կախադանների: Յես կգորահավաքեմ
ամբողջ հին վոստիկանութիւնը: Յես գործի
կդնեմ բոլոր ճիւղատները, մահակները, մտրակ-
ները: Միայն թե մենք պետք է ամուր պահենք
մեր միութիւնը:

Տ ե բ տ ե բ . — Դուք կլինեք մեր հայրը:

Կ ու լ ա կ . — Իսկ յես՝ ձեր վորդին...

Տ ե բ տ ե բ . — Յես ել՝ սուրբ հոգին:

(Կուլխի յետեվից դուրս են վազում եմիզրանտն
ու մենշեվիկը):

Ե մ ի գ բ ա ն տ . — Իսկ յես կլինեմ ձեր հրեշտա-
կը, հրեշտակապետը և փարավոնը:

Մ ե ն շ և ի կ . — Իսկ յես նորին մեծութիւն
կապիտալի պալատական խարազանը:

(Տերտերը, կուլակն ու կապիտալիստը ձեվացնում
են խմբական սրբապատկեր՝ ընմի կենտրոնում:
Եմիզրանտը բացում է նրանց զլխին ազգային
յեռագոյն դրոշ, իսկ մենշեվիկը դեղնագոյն փոք-
րիկ դրոշ, վորի վրա մակագրված է « $\mathcal{P}^1/2$ »)

Մ ե ն շ և ի կ և Ե մ ի գ բ ա ն տ (միասին կոկորդ
պատռելով). — Ուռռա՛, ուռռա՛, ուռռառռա՛ա՛ա՛...
(Հանկարծ լույսը փոխվում է կապույտի: Չայնա-
տարների (ռուսոր) վրայի լույսերը վառվում են:
Չայնատարներն սկսում են գործել):

Ա ջ ա կ ո ղ մ ի ձ ա յ ն ա տ ա ր . — Ընկերներ,
իպատասխան դեկավարի մահվան ավելի սեղ-
մենք մեր շարքերը, կոփենք յերկաթե դիսցիպ-
լինա ու տոկունութիւն:

Չ ա խ ա կ ո ղ մ ի ձ ա յ ն ա տ ա ր . — Լենինը մե-
ռավ, բայց կա նրա հիմնած կոմմունիստական
կուսակցութիւնը: Ավելի խտացնենք նրա շուրջը
մեր շարքերը:

Ա ջ ա կ ո ղ մ ի ձ ա յ ն ա տ ա ր . — Ճնշվածներ ամ-
բողջ աշխարհի, կոմիստերնի դրոշակի տակ պայ-
քարելով, տապալեցեք իմպերիալիզմը:

Չ ա խ ա կ ո ղ մ ի ձ ա յ ն ա տ ա ր . — Լենինի ա-
նունը մեր սրտներում—լարենք մեր կամքը՝ բուր-
ժուազիայի դեմ հաղթանակ տանելու համար:

Ա ջ ա կ ո ղ մ ի ձ ա յ ն ա տ ա ր . — Բանվորներ,
դեպի կուսակցութեան շարքերը:

Չ ա խ ա կ ո ղ մ ի ձ ա յ ն ա տ ա ր . — Յերիտասար-
դութիւն, մտիր կոմսոմոլի շարքերը:

Ա ջ ա կ ո ղ մ ի ձ ա յ ն ա տ ա ր . — Մանուկներ,
մտեք պիոներական շոկատները:

(Բեմի յետեվում լսվում է գործարանային շշակի
ձայն: Նրան միանում է յերկրորդը, յերրորդը...
Մեղմութեամբ տարածվում է գործարանի աղմու-
կը: Աստիճանաբար անում, ուժեղանում է: Մի-
քանի ակնթարթից հետո աղմուկն ու դրոշոցը

հասնում են վորոտի աստիճանի: Խմբական սրբանկարը բեմում ցրվում է: Կապիտուլիստը, տերտերն ու կուլակը կծկվում, կաշում են դազգյաններին: Եմիգրանտն ու մենշեվիկը սարսափահար գետին են տարածվում նախաբեմում: Վահանի ձախ դոնակի վարագույրը բացվում է, յեվ այնտեղից մեկնվում է մի մակագրութուն—:

Հ Ա Մ Կ Ո Մ Կ Ո Ւ Ս

Գործարանի աղմուկը չի դադարում: Բեմի վրա գտնվողները խուճապի մեջ են: Այդ միջոցին վերելից բեմ է ընկնում մի թերթ թուղթ: Մենշեվիկը առնում է թուղթը յեվ սողալով առաջանում դեպի նախաբեմը: Գործարանի դղրոցը ծածկող ձայնով կարդում է) :

Մ Ե Ն Ղ Լ Ի Կ.—«Ընկեր Լենինի անվան պողպատաձուլական գործարանի բանվորներից դիմում կոմմունիստական բջիջին:—Մնդրում ենք ընդունել կուսակցության մեջ գործարանի բոլոր բանվորներին միանգամից»:

Ա. դ ա դ ա կ ն ե ը.—Ի՞նչ:

— Այդ պրովակացիա յե:

— Կարանու...

(Վերից ընկնում է ելի մի թերթ, ապա մյուսը, յերրորդը... Դիմումները թափվում են ծրարներով:

Դիմումների տարափը ծածկում է բեմը: Խուճապ բեմի վրա գտնվողների մեջ: Վահանի անցքի վերելում հայտնվում է սի պլակատ.—

**Մնդրում ենք ընդունել
կոմկուսի մեջ 100 մարդ**

Սրան փոխարինում են իրար հաջորդող թվերը—

1000 մարդ

10.000 մարդ

50.000 մարդ

100.000 մարդ

Բուրժուազիան խուճապի մատնված փախչում է) :

Մ Ե Ն Ղ Լ Ի Կ (փախչելով).—Քաղաքացիներ, քաղաքացիներ, պարոններ: Մենք դեռևս կարող ենք տանել խաղը: Սողոսկենք կուսակցության մեջ: Շտապելուց նրանք չեն նկատի: Պայթեցնենք կուսակցութունը ներսից:

(Հնչում է քայլերով: Չախ կուլիսից, համաչափ քայլերով, դուրս է գալիս բանվորների շարքը՝ յուրաքանչյուրը մի թերթ թուղթ ձեռքին: Ան-

ընդհատ ժապավենով ներս են լցվում վահանի
այն դռնակից, վորի վրա մակազրված է «Համ-
կովուս»: Բացվում է վահանի աջ դռնակը: Նրա
վրա հայտնվում է այս մակազրույթունը—

Կ. Վ. Հ. (գտում)

Վառվում են ձայնատարների վրայի լույսերը):

Ձ ա խ ա կ ող մ ի ձ ա յ ն ա տ ա ր .— Կենտրոնա-
կան Վերահսկիչ Հանձնաժողովի վորոշման հա-
մաձայն կուսակցութունից վտարվում են, վոր-
պես անհարազատ և ներս սողոսկած տարրեր—
(Վահանի աջ դռնակից սկսում են մեկը մյուսի
յետեվից դուրս գալ զանազան տիպեր: Դուրս են
թռչում եմիզրանտը, մենշեվիկը, կուլակը յեվ այլն):

Ա ջ ա կ ող մ ի ձ ա յ ն ա տ ա ր .— Թող կորչեն
կուսակցութունից ներս սողոսկածները:

(Վերեվի անցում հայտնվում է մի պլակատ):

200,000 բանվորներ ընդունել կուսակցու-
թյան մեջ—լավագույն հուշարձանն է
Լենինի համար

Ձ ա խ ա կ ող մ ի ձ ա յ ն ա տ ա ր .— Ընկերներ,
սրանք առաջին քալերն են լենինիզմի դրոշա-
կի տակ:

(Նախորդ պլակատը փոխարինվում է նորերով):

750.000 անդամ ունի Հ. Կ. Կ. դեկավարի
մահվան յերկրորդ տարեդարձին

1.250.000 կոմյերիտականներ—յերկրորդ
տարեդարձին

1.500.000 պիոներներ առաջ են ընթանում
Լենինի պատգամներով

Ա ջ ա կ ող մ ի ձ ա յ ն ա տ ա ր .— Ընկերներ, ա-
ռաջ՝ առանց Լենինի—Լենինի պես:

(Բանվորների շարքը շարունակում է մտնել „Հ.Կ.Կ.“:
Աշխուժ քալերգ*):

(Վարագույր)

* Վորտեղ հնարավոր է, լավ է ոգտագործել անպայման յե-
րաժշտախումբ:

ՅԵՐՈՐԳ պատկեր

Շ Ա Ղ Կ Ա Պ

(Վարազույրի առաջ հայտնվում ե պիոները):

Պիոներ.— Ընկերներ, դուք տեսաք՝ ինչպես ընդունեցին բանվորները Իլլիչի մահվան լուրը և ինչով պատասխանեցին բուրժուազիայի գրոհին, վորը կարծում եր, թե բանվորները գլուխները կկորցնեն: Բայց նա սխալվեց: Նրանք իրենց չկորցրին, նրանք տեսան, վոր նրանց դեկավարում ե Լենինի կուսակցությունը, վորին փոխարինելու համար աճում ե կոմսոմոլը և մենք, պիոներներս—պատանի պիոներներս: Մենք միշտ հաստատ կընթանանք այն գրանիտե ճանապարհով, վոր բացեց Լենինը: Այժմ, ընկերներ, դուք տեսաք այն, ինչ վոր մոռանալ չեր թույլ տա ընկեր Լենինը, այն, ինչ վոր նա ավանդել ե մեզ անդադար ամբացնել:

(Գնում ե: Բացվում ե վարազույրը: Բեմի մի կողմում կախված ե «Քաղաք» մահազրույթունը, մյուս կողմում՝ «Գյուղ»: Նախաբեմում, «Քաղաք» մահազրույթյան մոտ, կանգնած են քաղաքաբնակ պիոներները յեվ պիոներուհիները, իսկ «Գյուղ»

մահազրույթյան մոտ՝ գյուղաբնակ տղան ու աղջիկը: Յերածշտույթունը նվագում ե ժողովրդական յերգի յեղանակը):

Գյուղական տղա (յերգում ե).—
Լսիր, Սոնիա, ինչ անենք,
չուն թակելուց խեր չկա:
Արի մեր ճամբար տանենք
գյուղի տղին, աղջկան:

(Յուրաքանչյուր տան վերջին յերկու տողերը կրկնում ե ամբողջ խումբը):

Աղջիկ.—

Թող ինձ մերս չխանգարի,
ջահել որս չխավարի,
կպայքարեմ յես համառ
ընկերներով անհամար:

Տղա.—

Միրուն Սոնիա, գործ ե պեաք,
գործ սկսենք, ել հերիք.
կարմիր վզկապ ել կապենք,
առաջ գնանք հանդերից:

Յերկուսը միասին.—

Տղերանց հետ քաղաքի
մենք ուսուսի կբալենք.
կաշխատենք ուրախագին,
կսովորենք, կփայլենք:

(Յերածշտուծյունը փոխվում է քայլերգի: Պատանիները նվագի տակ անցնում են նախաբեմ: քաղաքաբնակ յերեխաները գյուղացիների վզերին կապում են թաշկինակ, կրծքներին կպցնում նշաններ: Յերածշտուծյունը նորից փոխվում է ժողովըրդախանի):

Պիոնեթ.—

Ուխտի, լավ եր ու սիրուն
այս ամառը ճամբարում.
բոլորն ուրախ են, ուրախ,
վոր պիոնեթ դարձրինք նրանց:

Պիոնեթ ու հի.—

են հին ուղին ծոեցինք,
մենք նոր դաշինք կոեցինք,
ջան, փոքրերը գյուղական
մեր յետևից լավ յեկան:

Միասին.—

Պատրաստ յեղիր հիմա դեռ՝
քաղաքում ել պատրաստել
կարմրափողկապ պիոնեթներ,
Իլլիչ պապի թոռնիկներ:

(Յերածշտախումբը նորից նվագում է քայլերգ: Յերեխաներն անցնում են առաջաբեմ, պատիվ են բռնում: Յերածշտախումբը նվագում է «Պիոնեթական քայլերգը»):

Բոլորը.—

Մենք հո կուել ենք
ամուր մի դաշինք.
կորչեն բուրժուաները,
հին, քեզ խշտիկ:
Մոտ է շրջանը
լուսե դարերի,
պիոնեթի կանչն է՝

«Միշտ պատրաստ յեղիր»:

Արդեն մեր հայրերը
կռիվն սկսեցին.
մենք ել հոկտեմբերը
համաշխարհային:

Մոտ է շրջանը
ահեղ մարտերի,
պիոնեթի կանչն է՝

«Միշտ պատրաստ յեղիր»:

Շաղկապն ամուր է,
մի սիրտ ենք, մի ջիղ.
բերում են կոմսունը
թոռներն Իլլիչի:
Մոտ է շրջանը
լուսե դարերի,
պիոնեթի կանչն է՝

«Միշտ պատրաստ յեղիր»:

(Փիգուրային յերթով անցնում են բեմից):

(Վարագուլը)

տարում են Ֆիգուրային յերթ*, վորից հետո շար-
վում են նախաբեմում՝ յեվ դազգլահների մոտ:
Նախաբեմում կանգնած ե շարքը, կենտրոնում ու-
նենալով իր դեկավարին, վորից աջ ու ձախ գտըն-
վում են թմբկահարը, գորնիստը յեվ դրոշակները:
Շարքի ամեն մի պիոների կրծքին մեկակամ տառ,
վորոնք միասին կազմում են հետեվյալ լրգունքը.

ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ—ԼԵՆԻՆԻ ՊԵՍ

(Յերածշտախումբը նվագում ե տուշ**, վորից հետո
պիոներները բարեկ են բռնում):

Ընդհանուր յերգ (Ուտերնացիոնալ).—
Վոչվոք չի փրկի այս աշխաշհը—
վոչ ցար, վոչ սուրբ ու վոչ հերոս.
Գծված ե փրկության ճանապարհը
Լենինի հզոր ձեռքերով:
Մի ծայրից մինչև մյուսն յերկրագնդի
տանենք պատգամները նրա ումբ,
կրակում համաշխարհային հրդեհի
յերգենք միաձույլ կրծքերով:
Սա յե վերջին կոիվը
և պայքարը մեր հին:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

* Կատարել ֆիգուրայի զեկավարի հետ:
** Լավ կլինի, յի՛թե լինեն ֆանֆարներ:

(Յերգից հետո բոլորը զույգ-զույգ, առաջին զույգից
սկսած, իջնում են թատերասրահ: Զույգերը յերկու
կողմերից պիտի կանոնավոր: կերպով միանան
կենտրոնում: Հստակ պտոյամներ, հավասար ին-
տերվալներ: «Красная Армия» յերգի յեղանակի տակ
անցնում են դահլիճի միջով):

Բոլորը յերգում են.—
Լենինի գունդ դու,
բայլեր առաջ.
Չանք ե պահանջում
գործը նրա:
Լենինը սրտումդ—
ուժ տուր գործին.
Քայլըդ անդուլ միշտ,—
կոմմուն կառուցիր:
Յեվ ով վոր մեզ հետ ե,
մեր դրոշի տակ,—
կոիր, ամբացրու
մեր սերտ միությունը,
հայացըդ վստահ,
քայլերդ հաստատ՝
բռնե ե գիտցիր, հաղթությունը



« Ազգային գրադարան



NL0319510

9930



ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

891.71

Ն-70